Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ
a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

70/4166/ 17 ապրիլի 2012 երեքշաբթի

ISSN 1829-2224
12058

Ա

## Փնտրեք տղամարդուն

Երբ ֆրանսիացիները խորհուրդ են տալիս փնտրել կնոջը (cherchez la femme), նրանք նկատի ունեն հետեւյալը. երբեմն տղամարդկանց վարքագծի շարժառիթները մշուշոտ են մնում, եւ այդ դեպքերում նրանց քայլերի տրամաբանությունը կարող է «վերծանվել» այն կանանց միջոցով, որոնք առաջին հայացքից իրադարձությունների կիզակետում չեն, բայց փոխարենն իրենց սեւ կամ «սպիտակ» գործն անում են ետնաբեմից: Այդպիսով, դա տիպիկ ֆեոդալական ասացվածք է, երբ հասարակական կյանքում գործում էին տղամարդիկ, իսկ կանայք նրանց «բզբզում էին» որպես օրինական կամ ոչ օրինական կողակիցներ:

Մեր լուսավոր դարում ամեն ինչ ճիշտ հակառակն է, եւ մասնավորապես Հայաստանում պետք է ասել՝ փնտրեք տղամարդուն, որովհետեւ իրադարձությունների «հարթակում» կանայք են, իսկ բզբզողի դերում՝ տղամարդիկ: Դատեք ինքներդ: 1990 թվականին կանայք են ջարդել ԳԽ նախագահ, լուսահոգի Հրանտ Ոսկանյանի գլուխը: Որովհետեւ նա, այդ կանանց ձեւակերպմամբ, «թուրք» էր եւ «դավաճան»: 1996 թվականի սեպտեմբերի 25-ին խորհրդարանի նախագահի ու փոխնախագահի վրա հարձակվողների առաջին շարքերում դարձյալ կանայք էին, որոնք այս անգամ կարծում էին, որ Տեր-Պետրոսյանն է «թուրք» եւ «դավաճան»: Հիմա ՀԱԿ-ի հանրահավաքներում ովքե՞ր են կանգնած միտինգավորների առաջին շարքում, եւ ովքե՞ր են ամենաբարձր բղավում՝ «Սերժիկ, հեռացիր», «Լեւոն, նախագահ»: Իհարկե, կանայք՝ «բետեեռները», ինչպես նրանց ընդունված է անվանել:

Ինչ խոսք, անարդարացի կլիներ ասել, որ կանանց, որպես գրոհային ջոկատ, ուղարկելը միայն ընդդիմության գործելակերպն է: Օրինակ՝ երբ «Առավոտը» գրում է դպրոցի որեւէ կաշառակեր (եւ, ի դեպ, ընտրակեղծարար) տնօրենի մասին, հենց կանայք են գալիս խմբագրություն եւ լաչառություն անում: Կամ մի անգամ գործարարներից մեկը, որի արտադրանքի մասին բացասաբար էինք արտահայտվել, «Առավոտ» էր ուղարկել մի քանի տասնյակ իր աշխատակցուհիներին, որ նրանք այստեղ «միտինգ անեն»: Այդպես էր, հավանաբար, տվյալ գործարարը պատկերացնում «ժողովրդի ձայնը»: Հիմա էլ մեկ այլ գործարար՝ իր ընդդիմադիր մրցակցի ընտրարշավին խոչընդոտելու համար, դարձյալ ուղարկում է համապատասխան կանանց, այսպես ասած՝ «Կլարա Խաչիկովնաներ»՝ բանգլադեշյան աշխարհընկալմամբ:

Մի խոսքով՝ կանայք, որպես կանոն, ավելի էմոցիոնալ են, եւ դրանից օգտվում են տղամարդիկ: Ես նույնիսկ մի կին գիտեմ, որը Ռոբերտ Քոչարյանի երկրպագուն է եւ մեր կայքում իր մեկնաբանություններում խիստ ընդվզում է, երբ երկրորդ նախագահի հասցեին որեւէ բացասական բառ է գրվում: Հիրավի, առեղծված է կանացի հոգին:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Միջազգային աննախադեպ գիտաժողով՝ Մանկավարժականում

Երեւանում երեկ մեկնարկեց Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կազմակերպած «Փոխակերպվող հասարակության զարգացման տեսական եւ գործնական հիմնախնդիրներ (փիլիսոփայական եւ հոգեբանական տեսանկյուններ)» թեմայով երկօրյա միջազգային գիտաժողովը: Գիտաժողովին մասնակցում են ակադեմիկոս, Աթենքի համալսարանի պատվավոր ռեկտոր, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ, արդի ժամանակաշրջանի խոշորագույն փիլիսոփա Եվանգելոս Մոութսոպուլոսը, Ինսբրուքի համալսարանի փիլիսոփայության բաժանմունքի ղեկավար, Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի համանախագահ Հանս Կոխլերը, Փիլիսոփայական ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (FISP) նախագահ ակադեմիկոս Պիտեր Կեմպը, Հոգեբանության եւ իրավունքի եվրոպական ընկերակցության նախագահ Դեյվիդ Կուկը, ինչպես նաեւ այլ խոշոր գիտնականներ Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Դանիայից, Բելգիայից, Ֆինլանդիայից, Արգենտինայից, Չեխիայից, Հունաստանից, Ռուսաստանից, Վրաստանից: Գիտաժողովի մանրամասները՝ հաջորդ համարում:





Եվանգելոս Մուլթսոպուլոսը






Հանս Կոխլերը

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### ՀԱԿ-ն առաջարկեց մեդալներ տալ Մասիսի ոստիկանությանը

Երեկ ՀԱԿ-ը նախընտրական քարոզարշավը շարունակեց Արարատի մարզում: Մասիս քաղաքում Արամ Մանուկյանը կոչ արեց չխեղճանալ. «Նամուսի, թասիբի կռիվ ա, եկեք մեր նամուսը պահենք: Էդ ծառերի տակից ես կողմ եկեք, մի վախեցեք»: Լեւոն Զուրաբյանը, նկատելով, որ հանրահավաքն այնքան էլ բազմամարդ չէ, առաջարկեց Սերժ Սարգսյանին Մասիսի ոստիկանությանը, ազգային անվտանգության ծառայողներին, այստեղի իշխանությանը մեդալներ տալ, որովհետեւ նրանք «փայլուն կատարել են իրենց դերը, լավ վախեցրել են Մասիսի ժողովրդին, որ չգան միտինգի»:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

### Խոստանում են փոխել «Բարեգործության մասին» օրենքը

«Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների նախընտրական ծրագրում, որը վերնագրված է «Նոր Հայաստանի ծրագիրը», խոստում կա ԱԺ առաջիկա ընտրությունների արդյունքում խորհրդարանում մեծամասնություն կազմելու դեպքում փոփոխություններ կատարել մասնավորապես նաեւ «Բարեգործության մասին» օրենքում՝ «արգելելով քաղաքական նպատակներով կամ քաղաքական կազմակերպությունների կողմից իրականացվող բարեգործությունը»:

Կարդացեք էջ 3:

### «Ժառանգության» նախընտրական շտաբը դատապարտում է

«Ժառանգության» նախընտրական շտաբը դատապարտում է թիվ 7 ընտրատարածքում տեղի ունեցած միջադեպը. Սամվել Ալեքսանյանի կողմնակից կանայք խոչընդոտել են այդ նույն ընտրատարածքում առաջադրված պատգամավորության թեկնածու Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզարշավին, ինչպեսեւ մեկ այլ վայրում վերջինի վստահված անձանց կողմից քարոզչանյութերի տարածման ընթացքում նրանց հանդեպ բռնության գործադրումը: «Մենք նաեւ ցավով արձանագրում ենք, որ այս անհանդուրժողականության եւ փոխբացառման մթնոլորտը եւ քաղաքական գործունեության այս անընդունելի, ոչ քաղաքակիրթ մեթոդաբանությունը տարիներ շարունակ ներարկվել է մեր հասարակության որոշ հատվածներում»,- ասված է «Ժառանգության» նախընտրական շտաբի հայտարարության մեջ:

Միջադեպի մասին ՀՅԿ փոխնախագահի կարծիքը՝ 3-րդ էջում:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 11-ին, «Հայելի» ակումբի հյուրն է Հրանտ Բագրատյանը:

### Եղանակ

Երեւան + 7 + 23, Շիրակ - 1 + 17, Կոտայք - 1 + 17, Գեղարքունիք - 1 + 17, Լոռի + 3 + 19, Տավուշ + 7 + 21, Արագածոտն լեռներ - 1 + 17, Արագածոտն նախալեռն. + 5 + 22, Արարատ + 5 + 23, Արմավիր + 5 + 23, Վայոց Ձոր լեռներ - 1 + 17, Վայոց Ձոր նախալեռն. + 5 + 23, Սյունիքի հովիտներ + 9 + 19, Սյունիքի նախալեռներ + 4 + 17

## Նախագահը կաթնաղցիներին կոչ արեց կատարել ճիշտ ընտրություն

Երեկ Կաթնաղում ՀՀԿ-ի նախընտրական հերթական քարոզչության ընթացքում անձրեւային եղանակ էր, եւ մարզկենտրոնի հրապարակում շարունակ տեղացող անձրեւի տակ էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ելույթ ունենում:

«Մեկ անգամ եւս խնդրում եմ, որ դուք ձեր քվեն տաք մեզ»,- քարոզչական իր ելույթում կաթնաղցիներին դիմել է նախագահը եւ կոչ արել կատարել ճիշտ ընտրություն, որպեսզի Հայաստանը լինի ճիշտ ձեռքերում: Նախագահը խոսել է առաջիկա ծրագրերից ու անելիքներից՝ այդ թվում նաեւ կառուցվելիք հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման մասին, որին այդքան երկար դեռ սպասում են մայրաքաղաքից բավականին հեռու գտնվող մարզկենտրոնի բնակիչները:

«Հիմա նախընտրական շրջան է, եւ շատ քաղաքական ուժեր գալու են, խոստումներ են տալու, դա լավ է, նորմալ երեւույթ է, բայց նաեւ բնականաբար քննադատելու են ե՛ւ մեզ, ե՛ւ մյուսներին, կուրծք են ծեծելու, ասելու են, որ միայն ու միայն իրենք կարող են այս երկիրն առաջ տանել, կեղծիքների դեմ պայքարել, միայն ու միայն իրենք կարող են զարգացում ապահովել: Բայց խնդիրը նրանում է, որ այդ քաղաքական ուժերի մի մասն արդեն այդ հնարավորությունն ունեցել է, եւ, ցավոք սրտի, մենք որեւէ արդյունք չենք տեսել, մյուս մասն էլ մարդիկ են, էլի ցավոք սրտի, ովքեր երբեւէ չեն ղեկավարել, չեն եղել պետական պաշտոնի, չգիտեն, թե ինչ է նշանակում պետության հնարավորությունները, ծավալների մասին որեւէ պատկերացումներ չունեն»,- իր ելույթում ասել է ՀՀ նախագահը:

Անձրեւային եղանակի պատճառով հրապարակում շատ մարդ չէր հավաքվել, ներկա գտնվողներն էլ հիմնականում այս կամ այն կառույցների աշխատակիցներ էին, ովքեր նախագահի ելույթից հետո հեռացան, իսկ Սերժ Սարգսյանի ելույթին հաջորդեց համերգային ծրագիր, որի բացումն արեց երգիչ Արամեն՝ գրեթե դատարկված հրապարակի առաջ կատարելով իր երգը:

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

## Ուրիշների փոխարեն ամաչում են դաշնակցականները

Երեկ այս մասին ՀՅԴ ներկայացուցիչները խոսեցին Արթիկի հրապարակում՝ նեղսրտելով, որ որոշ քաղաքական ուժեր խաղում են հայ մարդու, ազգի արժանապատվության հետ, եւ ինչպես Արտյուշա Շահբազյանն ասաց. «Ուրիշի տեղը ամաչում ենք ու չգիտենք՝ ի՞նչ ասել, իսկապես մեր ժողովրդի արժանապատվությունն են վիրավորում»:

Քանի որ նույնը իր ելույթում կրկնեց նաեւ ԱԺ պատգամավոր Ռուզաննա Առաքելյանը, Aravot.am-ը, մոտենալով պատգամավորին, հարցրեց՝ ո՞ւմ փոխարեն է ամաչում Դաշնակցությունը՝ ՕԵԿ-ի՞: Պատգամավորը, խուսափելով մատնանշել որեւէ քաղաքական ուժի, պարզապես հավելեց, որ ամաչում են ոչ միայն մուրաբա ու ջեմ բաժանողների, այլ նաեւ սերմացու բաժանողների փոխարեն, ի՞նչ տարբերություն: «Ինձ համար կաշառքը ժողովրդին շհարգել է, դու որքան պիտի քո ժողովրդի արժանապատվությունը բարձր չգնահատես, որ իրեն բերես մուրաբա բաժանես: Այն քաղաքական ուժը, որը փորձում է կաշառել՝ ջեմ չլինի, լինի սերմացու, սա վերաբերմունք չէ»,- մեկ անգամ եւս կրկնեց նա:

Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

# «Ժամանակն է ձերբազատվել ցածրակարգ ֆիդայիզմից»

## Ասում է իրավապաշտպան Վարդան Հարությունյանը

- Թե Գյումրին, ուր փորձում էին ադրբեջանական ֆիլմերի փառատոն անցկացնել, թե ողջ հանրապետությունը ընդվզեց այդ նախաձեռնության դեմ: Ինչո՞ւ էին այդքան համառ նախաձեռնողները:

- Ողջ հանրապետության մասին ոչինչ ասել չեմ կարող: Կարծում եմ՝ չափազանցված է նման կարծիքը, բայց Գյումրիում իրոք կրքերը թեժ են եղել: Ֆիլմերի ցուցադրման նախաձեռնության դեմ սկսված այս արշավը արհեստական ու մտացածին է: Ես երբեք չեմ հավատա, որ հայաստանցու համար հետաքրքիր չէ, թե ինչ ֆիլմեր են նկարահանվում Ադրբեջանում: Նաեւ չեմ հավատա, որ մեր մեջ ատելությունը հարեւան ժողովրդի նկատմամբ այնքան շատ է, որ մեզ կուրացրել է: Եթե դա այդպես լիներ՝ այս նույն դրսեւորումները մենք պետք է տեսնեինք «Ոսկե Ծիրան» փառատոնի ժամանակ, երբ եւ ադրբեջանական, եւ թուրքական ֆիլմեր են ցուցադրում, քննարկում, խոսում դրանց մասին: Այս հանգամանքը գալիս է փաստելու, որ սկիզբ առած այս «հակացուցադրումն» ինքը կինո է, հորինվածք ու բեմականացում: Իսկ նախաձեռնողները համառ էին երեւի, որովհետեւ ծրագիրն իրականացնելու պարտավորություն ունեն:

Ինքը՝ ծրագիրը, վատ գաղափար չէ, եւ դրա ճիշտ մատուցումն ու իրականացումը միայն օգուտ կարող են բերել: Վստահ եմ, որ նման ծրագրեր պետք է իրականացվեն հնարավորինս շատ ու հաճախ, բայց ճիշտ մատուցմամբ: Ճիշտ մատուցումը չափազանց կարեւոր է:

- Իր ընդդիմադիր կեցվածքով հայտնի «Ասպարեզը», որ միշտ հասարակության կողքին է ընդդեմ իշխանության, ինչո՞ւ այս անգամ բրիկադի հակառակ կողմում հայտնվեց:

- Կարծում եմ՝ այս պատմության մեջ նույնպես, ինչպես միշտ, «Ասպարեզը» իր ճիշտ տեղում էր: Այստեղ բարիկադներ գոյություն չունեն, որ մեկը լինի բարիկադի այս, մյուսն՝ այն կողմում: «Ասպարեզի» ղեկավարն իր բացատրություններն այս կապակցությամբ արդեն տվել է: Ցանկացած հասարակական կազմակերպություն կարող էր եւ աջակցել այս նախաձեռնու-



թյանը, եւ իր տարածքը տրամադրել, եթե տարածք ունի: Անձամբ ինձ հրավիրել էին ցուցադրմանը, եւ եթե այն չլիներ Երեւանից հեռու՝ ես անպայման կմասնակցեի: Ի՞նչ է, դրանից կհետեւեր, որ այդ կուրծք ծեծողներն ու կազմակերպիչների վրա հարձակվողներն ինձանից ավելի՞ հայրենասեր են: Վաղուց ժամանակն է ձերբազատվել այս վիրավորական ու ցածրակարգ ֆիդայիզմից: Մենք ապրում ենք 21-րդ դարում:

- Կա կարծիք, թե սա ընտրություններից եւ մշակված ընտրակեղծիքներից հասարակության ուշադրությունը շեղելու փորձ էր: Որքանո՞վ է սա մոտ իրականությանը:

- Սա ինչ-որ առումով, իհարկե, մարդկանց ուշադրությունը շեղելու համար եւ քարոզչական նպատակներով կօգտագործվի ու արդեն օգտագործվում է: Նաեւ ոմանց համար կուրծք ծեծելու, մազերը հանուն հայրենիքի փետելու ու սեփական քարանձավային հայրենասիրությունը ցուցադրելու լավ հնարավորություն է:

- Մենք ենք շատ անհանդուրժո՞ղ ու Գեորգի Վանյանը միակ խաղաղասերը, թե՞ իրերի դրությունը քիչ այլ է:

- Մենք անհանդուրժող չենք եւ ոչ էլ Գեորգի Վանյանը միակ խաղաղարարն է: Խաղաղարարությունը չի կարող եւ չպետք է ագրեսիվ լինի: Ագրեսիվ պացիֆիզմ եւ ագրեսիվ խաղաղարարություն չի լինում: Այն պետք է լինի մեղմ, սահուն: Այն պետք է լինի դա քարոզողի հավատամքը, էությունը, այդ դեպքում հեշտ է լինում դրա կենսագործումը:

20-րդ դարասկզբին հայերի ու ադրբեջանցիների միջեւ թշնամությունն ավելի պակաս չէր: Գենոցիդ էր եղել, շատ ավելի արյուն էր հոսել, շատ ավելի կորուստներ էին եղել, բայց ոչ ոք խաղաղարար նախաձեռնություններով հանդես եկող Թումանյանին չէր պատակում կամ քարկոծում: Նա կարողանում էր այդ նախաձեռնությունը մատուցել այնպես, որ մարդիկ կարողանան դա ընդունել: Խաղաղարարությունը բխում էր նրա էությունից, ու բնական էր:

- Ծրագիրը ֆինանսավորում էին ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան: Ծրագրի այսքան բուռն մերժումն ու դատապարտումը Հայաստանի հետ հարաբերությունների վրա որեւէ ազդեցություն կունենա՞:

- Չեմ կարծում, թե սա որեւէ կերպ կարող է միջպետական մակարդակներում ազդել այդ երկրների հետ ունեցած մեր հարաբերությունների վրա: Սա ընդամենը կարող է մեր մասին հերթական բացասական կարծիքի ձեւավորման պատճառ դառնալ: Նորմալ մտածող եվրոպացու աչքերում մենք այս դեպքով մեկ ավելորդ անգամ եւս երեւում ենք որպես այլ տեսակետ ու կարծիք չհանդուրժող զանգված:

- Ինչո՞ւ նման ծրագրեր չեն իրականացնում կամ գոնե չեն փորձում իրականացնել Ադրբեջանում:

- Նման ծրագրեր չեն իրականացվում Ադրբեջանում ճիշտ նույն պատճառով, ինչ Հայաստանում: Մենք չափազանց նման ենք իրար մեր մտածողությամբ: Այնտեղ էլ ճիշտ մեր կուրծք ծեծողների նման հայրենասերներ կան, ովքեր պատրաստ են նման նախաձեռնությամբ հանդես եկողներին հայհոյել ճիշտ նույն բառերով, հակաճառել նույն փաստարկներով եւ գլուխները ջարդել նույն ոգեւորությամբ: Սա պատիվ չի բերում եւ մեզ, եւ նրանց:

Վերջին հաշվով այս հակամարտությունն ու թշնամությունը երկար չի տեւելու: Մենք հարեւաններ ենք, եւ ինչ էլ ուզում է լինի, իրար հետ ենք ապրելու: Խաղաղությունն ու համակեցությունն այլընտրանք չունեն: Խաղաղության այլընտրանքը պատերազմն է: Սպանված զինվորն ու հրետակոծված գյուղն է խաղաղության այլընտրանքը: Եվ եթե սպանված զինվոր ու հրետակոծված գյուղ ունենալ չենք ուզում, ուրեմն պետք է հիմիկվանից պատրաստվենք խաղաղ գոյակցության: Դրա փոխարեն եւ Հայաստանում, եւ Ադրբեջանում հակաքարոզչությունը, հարեւանի նկատմամբ ատելության սերմանումը բարձրացվել են պետական քաղաքականության մակարդակ: Նախագահի բերանով, նկատի ունեմ Քոչարյանին, ասվում է մեր երկու ժողովուրդների գենետիկ անհամատեղելիության մասին:

Երկու երկրներում էլ պետության հովանավորության տակ գործող լրատվամիջոցներն ու կազմակերպությունները անընդհատ ատելության քարոզով են զբաղված: Ինչքան քիչ է այս կամ այն լրատվամիջոցը, կազմակերպությունը կամ անհատ գործիչը կախված գործող իշխանություններից՝ այնքան հանդուրժող ու լայնախոհ է: Ցավոք, եւ մեզ մոտ, եւ նրանց մոտ նույն պատկերն է:

Զրույցը՝

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ

# «Այս իշխանությունը կախված է արտաքին ուժերից»

## ՀԱԿ առաջնորդը բացահայտում է «Վիքիլիքսի» փաստաթղթերը

Երեկ Մասիսում ՀԱԿ-ի համահավաքին Կոնգրեսի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը նկատեց, որ նախորդ ընտրություններին իրենք Մասիսում եւ Էջմիածնում եղել են ընտրարշավի վերջում. «2008-ի ընտրարշավի ժամանակ Մասիսն ու Էջմիածինը եղել են ամենամարդաշատը: Այսօր ի՞նչն է պատճառը: Վախը չէ: 2008-ին ավելի վախեցած էին: Այս չորս տարվա ընթացքում Հայաստանի ակտիվ բնակչության մեծ մասը թողել-հեռացել է Հայաստանից»:

Ըստ առաջին նախագահի՝ այս իշխանությունները օգտվում են միջազգային հանրության օգնությունից. «Արեւմուտքին պետք է Սերժ Սարգսյանի նման գող իշխանություն, որովհետեւ նրանց կառավարելը հեշտ է: Այս իշխանությունը անկախ չէ, կախված է արտաքին ուժերից: Ո՞ր մի իշխանությունը կհամաձայներ ստեղծել հայ եւ թուրք պատմաբանների հանձնաժողով, որը պարզի՝ ցեղասպանություն եղե՞լ է, թե՞ չէ: Ես ավելին գիտեմ՝ Սերժ Սարգսյանը նրանց այդ խոստումը տվել է 2007-ին, «Վիքիլիքսի» փաստաթղթերում դա կա, մենք տեսել ենք: Սերժ Սարգսյանը ընտրություններից առաջ նրանց խոստացել էր համաձայնել Ղարաբաղի հարցի



լուծման մադրիդյան սկզբունքներին: Ի՞նչ բան է դա՝ դուք գիտե՞ք. դա այն փաստաթուղթն է, որի վրա 96-ին ես վետո դրեցի, չնայած պահելի ճնշումներին: Գոնե այն ժամանակ Ղարաբաղը կոնֆլիկտի կողմ էր, նրա ձայնը վճռորոշ էր: Ռոբերտ Քոչարյանին համոզեցին, որ պետք չէ Ղարաբաղը կողմ լինի ու բռնեցին դուրս շպրտեցին Ղարաբաղը: Հիմա նորից խոսք են տալիս, որ պետք է անպայման ներգրավենք Ղարաբաղը բանակցային գործընթացի մեջ: Ի՞նչ ներգրավելու մասին է խոսքը, Ղարաբաղը ունի մանդատ, այն նրան տվել է Բուդապեշտի գագաթաժողովը, պետք է պայքարենք այդ մանդատը նորից ետ վերցնելու համար: Սա անճարակություն է: Հիմա էլի եկել են՝ ձեզնից ձա՞յն են խնդրում»:

Խոսելով ընտրակաշառքներից՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը վստահեցրեց, որ «5-10 հազար դրամ բաժանելով՝ այդ ընթացքում իրենք ձեզանից գիտե՞ք ինչքան են գողանում, ամեն տարի 5 մլրդ դոլար այս հաստավիզները գողանում են ձեզանից: Ես չեմ վախենում սա ասել՝ նախագահից սկսած՝ իր բոլոր նախարարներով, մարզպետներով, կառավարությունով գող-ավազակներ են»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

Ա aravot daily
ԵՐԵՔՇԱԲԹԻ 17.04.2012

# «Ժառանգությունը» խոստանում է սահմանափակել ՀՀ նախագահի լիազորությունները

Նաեւ՝ ընտրվելու դեպքում հանդես գալ ԱԺ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցում կատարելու օրենսդրական նախաձեռնությամբ:

«Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունները օրերս ներկայացրին իրենց «Նոր Հայաստանի ծրագիրը» վերնագրված 16 էջանոց նախընտրական ծրագիրը (http://heritage.am/hy/about/election-program): Այն բաղկացած է 15 ենթաբաժիններից՝ ներառելով մասնավորապես նաեւ քաղաքական, տնտեսական, սոցիալական, առողջապահական, գյուղատնտեսական, բնապահպանական ու դատաիրավական, նաեւ այլ ոլորտներում առաջիկա 5 տարիների համար նախատեսված բարեփոխումների վերաբերյալ այդ կուսակցությունների տեսլականն ու դրա կենսագործմանն ուղղված օրենսդրական այն քայլերն ու բարեփոխումները, որոնց միջոցով «Ժառանգությունն» ակնկալում է իրագործել իր հետապնդած նպատակները: Իր ծրագիրը «Ժառանգությունը» գնահատում է որպես «միանգամայն իրատեսական» եւ հայտարարում, թե «խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱԺ-ում մեծամասնություն ստանալու ու կառավարություն կազմավորելու դեպքում» իրենք գալու են ապահովելու այդ ծրագրերի իրագործումը:

Այսպես, «Ժառանգության» ծրագրի առավել առանցքային մի քանի դրույթներ վերաբերում են քաղաքացու իրավունքների եւ ազատությունների երաշխավորմանն ու պետության կողմից քաղաքացու պաշտպանվածությունն ապահովող օրենսդրության բարեփոխումներին: «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցություններն այս ճանապարհին մտադիր են իրականացնել սահմանադրական փոփոխություններ եւ որդեգրել պետական կառավարման խորհրդարանական համակարգը, որը, նրանց համոզմամբ, «կպահովի կառավարության անդամների նշանակման այնպիսի համակարգ, որով կբացառվի պատահական, ոչ արհեստավարժ մարդկանց մուտքը պետական բարձրագույն ծառայության օղակներ, կամրագրվեն կարգազանց, Սահմանադրության եւ օրենքների պահանջները ոտնահարող պատգամավորների, կառավարության անդամների լիազորությունների դադարեցման հստակ ընթացակարգեր, կձեւավորվի նախագահից ու գործադիր իշխանությունից անկախ դատական իշխանություն, կպահովվի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման համակարգերի կայուն զարգացում»:



«Ժառանգությունը» ծրագրում է նաեւ «ձեւավորել գործադիրից եւ օրենսդիրից իրապես անկախ Արդարադատության խորհուրդ, սահմանել դատավորների ու դատախազների նշանակման, առաջխաղացման առավել թափանցիկ ընթացակարգ, ընդունել նոր քրեական, քրեադատավարական, քաղաքացիական, քաղաքացիական դատավարության եւ այլ օրենսգրքեր, որոնք կամրագրեն քաղաքացու սահմանադրական իրավունքների խախտումների բողոքարկման կամ դրանց պաշտպանության շոշափելի ընթացակարգեր: Բարելավել ընտրական համակարգը, այդ թվում՝ ապահովելով բացառապես համամասնական ընտրակարգով ԱԺ ընտրությունների անցկացումը, քվեարկած ընտրողների ընտրացուցակների հրապարակայնությունը, քաղաքականապես հավասարակշռված ընտրական հանձնաժողովների ձեւավորումը, ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների համար խստագույն պատժամիջոցների կիրառումը», «ընտրական հանձնաժողովների գործունեության նկատմամբ իրական հասարակական վերահսկողության սահմանումը, ընտրական գործընթացի լիակատար թափանցիկությունը, արդյունքների բողոքարկման իրական հնարավորությունների ընձեռումը»:

ԱԺ-ում կրկին տեղ գրավելու դեպքում «Ժառանգությունը» նաեւ խոստանում է վերանայել «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին», «Ընդերքի անվտանգության մասին» օրենքները՝ բարձրացնելով սպառողի պաշտպանվածությունը, պետական վերահսկողությունը ապրանքների եւ ծառայությունների մատուցման շուկաներում: «Ընդունել խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման եւ ոռոգման ջրի մատակարարման ծառայություններ իրականացնող կազմակերպությունների իրավունքների եւ պարտականությունների մասին օրենք՝ առավել պաշտպանված դարձնելով այդ ծառայություններից օգտվող բնակչին ու քաղաքացուն: Փոփոխություններ եւ լրացումներ կատարել «Հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում՝ բացառելով «հանրային շահի» անվան տակ կառավարության միջնորդությամբ քաղաքացիների ունեզրկումը եւ սեփականազրկումը հանուն մասնավոր բիզնես շահերի, նախկինում նման որոշումներից տուժած բնակիչների համարժեք փոխհատուցում կատարել պատասխանատու պաշտոնյաների ու նրանց հետ հանցավոր գործարքի մեջ մտած կառուցապատողների միջոցներից, հարուցել վերջիններիս պատասխանատվության հարցը»: «Ժառանգությունը» մտադիր է նաեւ բարեփոխել «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին», «Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքները՝ դրանք համապատասխանեցնել Եվրոպայի խորհրդի չափանիշներին ու հեռարձակման ոլորտի բարելավմանը ներկայացվող պահանջներին, ընդունել «Խորհրդարանական ընդդիմության մասին» օրենք՝ ԵԽԽՎ համապատասխան բանաձեւերի ուղենիշների համաձայն ամրագրելով ընդդիմության երաշխավորված իրավունքները:

«Արդար կառավարում, օրինականության հաստատում, արդարադատություն եւ պայքար կոռուպցիայի դեմ» գլխում «Ժառանգությունը» կարեւորում է՝ «օրենքի համահավասար ու պատժելիության սկզբունքի կիրառում բարձրագույն պաշտոնյայից՝ նախագահից ու նրա ընտանիքի անդամներից մինչեւ ՀՀ շարքային քաղաքացի, չարաշահումների դեպքում՝ անկախ դատախազական վերահսկողության իրականացում»: Ծրագրային դրույթներից մեկն էլ այն է, որ «Ժառանգությունն» անհրաժեշտ է համարում հիմնել հատուկ մարմին՝ «անկախ դատախազի հաստատություն, որը կնշանակվի խորհրդարանի կողմից, եւ որի իրավասությունների մեջ կմտնի պետական ու հասարակական շահի ոտնահարման դեպքերում քրեական գործերի հարուցումը»: Առաջարկում է փոփոխություններ եւ լրացումներ անել «Հատուկ քննչական ծառայության մասին» օրենքում՝ վերացնելով ՀՔԾ-ի կախվածությունը դատախազությունից: «ՀՀ սահմանադրությամբ եւ օրենքներով նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկել երկրում արմատացած քաղաքական, համակարգային եւ վարչատնտեսական կոռուպցիայի ու անօրինականությունների գլխավոր պատասխանատուներին, ովքեր բազմիցս խախտել են երկրի Սահմանադրությունը եւ օրենքները»:

«Ժառանգության» ծրագրում անդրադարձ կա նաեւ «Մարտի 1»-ին. «Բացահայտել եւ արդարադատություն իրականացնել 2008թ. մարտի 1-2-ի ոճրագործության եւ հաջորդած զարգացումների հակաօրինական ու հակաիրավական բոլոր գործողությունների եւ դրանց մեղավորների նկատմամբ»: Կուսակցությունը խոստանում է ընտրվելու դեպքում «ապահովել քաղաքացիների ազատ արտահայտվելու, տեղաշարժվելու, հավաքներ կազմակերպելու եւ բողոքելու հիմնարար իրավունքներն ու պատասխանատվություն հարուցել այդ իրավունքները ոտնահարող պաշտոնյաների նկատմամբ: Պատասխանատվություն հարուցել քաղբանտարկյալների եւ քաղաքական շարժառիթներով ձերբակալված անձանց քաղաքական հետապնդումներն «օրինականացրած» դատավորների նկատմամբ: Տուժած քաղաքացիների վնասները փոխհատուցել ակնհայտորեն անարդար դատական ակտ հրապարակած դատավորի անձնական գույքի եւ ունեցվածքի հաշվին: Արմատապես բարեփոխել ոստիկանության համակարգը: Անհրաժեշտ բյուջետային միջոցներ հատկացնել ՀՀ տարածքում գործող կալանավայրերի վերանորոգման եւ ընդլայնման, դրանցում բանտախցերի գերբեռնվածության նվազեցման, այդ խցերի հակասանիտարական վիճակի, կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման նպատակին»,- ասված է «Ժառանգության»՝ «Նոր Հայաստանի ծրագիրը» նախընտրական փաստաթղթում:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Հ. Գ. «Ժառանգության» եւ «Ազատ դեմոկրատների» նախընտրական ծրագրի տնտեսական եւ սոցիալական ոլորտներին վերաբերող առանցքային դրույթների մասին՝ հաջորդիվ:

# «Չեմ կարծում՝ որեւէ մեկի քիթը, եթե քիթը որեւէ տեղ չի մտցրել, կոտրեն»

Թեեւ բոլոր կայքերն ահազանգում են Մալաթիա-Սեբաստիա համայնքում ՀԱԿ ներկայացուցիչ Նիկոլ Փաշինյանի հանդիպման ժամանակ տեղի ունեցած միջադեպի մասին, ինքը՝ պատգամավորի թեկնածուն էլ ահազանգել է ոստիկանություն, ՀՀԿ փոխնախագահի Գալուստ Սահակյանն ասաց, որ անտեղյակ է միջադեպից:

Հիշեցնենք, որ թիվ 7 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներն են ՀՀԿ-ի կողմից՝ հայտնի գործարար Սամվել Ալեքսանյանը, ՀԱԿ-ի կողմից՝ «Հայկական ժամանակ» թերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինյանը: Նախօրեին ընտրողների հետ Փաշինյանի հանդիպման ժամանակ Ալեքսանյանի կողմնակից կանայք փորձել են խանգարել Փաշինյանի հանդիպումը, իսկ ավելի ուշ՝ ժամը 19-ի սահմաններում, Հարավ-Արեւմտյան թաղամասում դաժան ծեծի է ենթարկվել պատգամավորության թեկնածու, ընդդիմադիր, Հայ ազգային կոնգրեսի համամասնական ընտրացուցակի 77-րդ համարը զբաղեցնող Բաբկեն Գարոյանը: Ականատեսների վկայությամբ՝ հարձակվողները եղել են թիվ 7 ընտրատարածքում առաջադրված հանրապետական թեկնածու Սամվել Ալեքսանյանի մտերիմները:

Aravot.am-ն այս առնչությամբ փորձեց մեկնաբանություններ ստանալ կարկառուն ՀՀԿ-ական Գալուստ Սահակյանից: Նրա հետ զրույցը ներկայացնում ենք ամբողջությամբ.

- Տեղեկություն չունեմ: Բայց խնդիրն ի՞նչ է:

- Նիկոլի հանդիպման ժամանակ Ալեքսանյանի կողմնակից կանայք հարձակվել են նրա վրա, քաշքշել են...

- Բայց նրանց անձնագրերին գրվա՞ծ է, որ Ալեքսանյանի կողմնակիցներն են:

- Իրենք ասել են, որ Ալեքսանյանի կողմնակիցներն են:

- Եթե մարդիկ կողմնորոշում ունեն ընտրելու՝ դա չի նշանակում կողմնակիցներն են:

- Կողմնորոշումը՝ կողմնորոշում, բայց թեկնածուի վրա հարձակվելը...

- Ինձ թվում է՝ դեռ էդպիսի բաներ շատ կլինեն: Դա յուրահատուկ ձեռագիր է, որը այս տարիների ընթացքում փորձում են շահարկման մեջ դնել:

- Այսինքն՝ Դուք ակնարկում եք, որ Նիկոլի կողմի՞ց է դա կազմակերպվել:

- Ես ակնարկում եմ, որ, ըստ էության, երեւի որեւէ բան էլ այդպես տեղի չի ունեցել: Ընտրություններ են, մի տեղ հաջողվում է, մի տեղ չի հաջողվում: Մենք էլ ենք գնում այս կողմ, այն կողմ, ինչ-որ տեղ խոսակցություններ են լինում, կարող է նաեւ նման միջադեպեր լինեն, բայց դա դարձնել այսպես քարոզչության նյութ, բնականաբար, մեր ճաշակի հետ չի համընկնում:

- Բայց ոչ մի տեղ ՀՀԿ-ի կողմնակիցների քիթը չեն կոտրել:

- Ո՞նց, էս չորս տարի է՝ անընդհատ միտինգներ են ձեւավորում, ինչ ասես՝ չեն ասում, ի՞նչ քիթը կոտրելու մասին ա խոսքը:

- Նկատի ունեմ, որ ֆիզիկական վնաս չեն հասցրել:

- Նիկոլ Փաշինյանի՞ քիթն են կոտրել:

- Ոչ, ՀԱԿ-ի կողմնակիցներից մեկի:

- Ես չեմ կարող մեկնաբանել, կանխավարկածային ինչ-որ բան եք ասում: (Սահակյանը քմծիծաղ է տալիս.- Ն. Գ.):

- Կանխավարկածային չի, մարդիկ ոստիկանությանն էլ են ահազանգել:

- Չգիտեմ՝ միջադեպն ինչպես է եղել, ինչպիսի շարժառիթ է եղել: Ես չեմ կարծում՝ որեւէ մեկի քիթը, եթե քիթը որեւէ տեղ չի մտցրել, կոտրեն: Դրա համար բնութագիրը պետք է լրիվ լինի, որ կարողանամ գնահատական տալ:

Ն. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Կուլակաթափ» կանեն ու անտոկոս վարկեր կտան

## Կոմունիստներն ու «Միավորված հայերը» չեն մանրամասնում, թե ինչպես են նշված «բարեփոխումներն» իրականացնելու

Հայաստանի կոմունիստներն իրենց նախընտրական ծրագրում այնպիսի առաջարկներ են անում, որ խորհրդային տարիներին կարոտ քաղաքացիները գայթակղությանը չդիմանան ու իրենց ձայնը տան կոմկուսին: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը ծրագրել է հանքարդյունաբերական, ալկոհոլային խմիչքների, հացի արտադրությամբ զբաղվող, բենզինի եւ այլ կարեւոր ոլորտների օլիգարխներին «կուլակաթափ անել»: Կուսակցությունը մտադիր է, ինչպես նշված է նախընտրական ծրագրում, խորհրդարանում տեղ գրավելու դեպքում տնտեսության ռազմավարական ճյուղերն ազգայնացնել, այսինքն՝ պետականացնել: Կոմունիստները համոզված են, որ միայն այդ կերպ նոր աշխատատեղեր կպահովեն եւ իսպառ կվերացնեն արտագաղթը: Այդուհանդերձ, կոմունիստները մտադիր չեն մասնավոր բիզնեսն ամբողջությամբ պետականացնել. հավանաբար, քաղաքական այս ուժն էլ հասկանում է, որ ամբողջությամբ վերադառնալ նախկին սոցիալիստական կարգերին պարզապես անհնար է, ուստի ՀԿԿ-ն որոշել է գոնե փոքր ու միջին ձեռներեցին «ձեռք չտալ»:

ՀԿԿ-ի նախընտրական ծրագրում նշված է՝ «Կրճատելով ներկրումները՝ զարգացնել եւ խթանել տեղական արտադրությունը,





փոքր եւ միջին բիզնեսը: Ամեն ինչով նպաստել եւ օգնել ինչպես բիզնեսմեններին, այնպես էլ անհատ ձեռներեցներին»: ՀԿԿ-ն իր ծրագրով այնպիսի առաջարկներ է ներկայացնում, որով գյուղաբնակների որոշ զանգվածին կարող է իր կողմը գրավել. «Գյուղի աշխատավորին գոնե 5 տարով ազատել բոլոր տեսակի հարկերից, տուրքերից: Նրան տրամադրել նպաստավոր վարկեր մինիմում գրավներով (ոչ ոսկի, ոչ անշարժ գույք), հողերի պահովագրումը դարձնել խիստ կարեւոր: Օրենքով արգելել հողի առուվաճառքը, ամրագրել սեփականության բոլոր ձեւերի զուգահեռ գոյությունը, տնտեսվարման այս կամ այն ձեւի ընտրությունը վերապահել գյուղացուն»:

Իսկ «Միավորված հայեր» կուսակցությունը (ՄՀԿ) ԱԺ-ում հայտնվելու դեպքում որոշել է ատոմակայանի ու էլեկտրական ցանցերի, կապի ու ռազմաարդյունաբերական ոլորտներում պետական վերահսկողություն իրականացնել: ՄՀԿ-ն եւս ձայներ հավաքելու համար գյուղացիների սրտով առաջարկներ է ներկայացնում՝ պետական իրական հովանավորությամբ ոռոգման ջրի ու պարարտանյութերի անվճար, անտոկոս երկարաժամկետ վարկերի տրամադրում, հողի հարկի դրույքաչափերի իջեցում: «Միավորված հայերն» էլ, կոմունիստների պես, մտադիր է փոքր-ինչ «կուլակաթափություն» անել: Գյումթերքների շուկան, որը մասնավոր գործարարներն են տնօրինում, գյուղացիներն էլ տեղի վարձ են տալիս, կուսակցությունը որոշել է անմիջնորդ վերադարձնել գյուղացուն: ՄՀԿ-ն, ինչպես գրված է ծրագրում՝ անզիջում պայքար է սկսելու թրաֆիքինգի դեմ, արտագաղթի դեմն առնելու է, դեռ մի բան էլ ներգաղթ է կազմակերպելու: Եթե այլ կուսակցություններ պետության ռազմապետական հիմնախնդիր են համարում գյուղատնտեսությունը կամ տեղական արտադրությունը, ապա ՄՀԿ-ն գտնում է, որ սպորտը պետք է լինի մեր երկրի ռազմավարական խնդիրներից ամենագլխավորը: Այս կուսակցության անդամների կարծիքով՝ սպորտը բնակչության առողջության պահպանման եւ զինված ուժերի բարձր մարտունակության գրավականն է: «Միավորված հայերը» գտնում է նաեւ, որ ազգաբնակչությանը պետք է ընդգրկեն համընդհանուր սպորտային մարզաձեւերում:

Կուսակցությունները վերը նշված առաջարկներից բացի՝ էլի մի շարք «լավ-լավ» բաներ են ծրագրել: Այս 2 կուսակցություններն էլ անդրադառնում են մեր երկրի գրեթե բոլոր ոլորտներին եւ «գեղեցիկ» բարեփոխումներ առաջարկում: Սակայն, ի տարբերություն մյուս կուսակցությունների, ՄՀԿ-ն ու ՀԿԿ-ն ոչ մի մեխանիզմ չեն նշում, թե կոնկրետ որ ոլորտում ինչպես են իրենց նշած բարեփոխումն իրականացնելու:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# «ՔՐՈՆԻՄԵՏ ՄայՆինգ» ԲԸ հայտարարությունը Քաջարան գյուղի եւ հարակից տարածքներին առնչվող խնդիրների վերաբերյալ

CRONIMET Mining AG

### Հարգելի քաղաքացիներ

«ՔՐՈՆԻՄԵՏ ՄայՆինգ» ընկերությունը, որպես «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հիմնական բաժնետեր, անհրաժեշտ է համարում իր դիրքորոշումը ներկայացնել ՀՀ կառավարության որոշմամբ Սյունիքի մարզի որոշ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու եւ այդ տարածքները ԶՊՄԿ-ին տրամադրելու շուրջ ծագած իրավիճակի կապակցությամբ:

ՀՀ կառավարության հիշատակված որոշումը բնապահպանական եւ այլ ուղղվածության որոշ հասարակական կազմակերպությունների, խմբերի եւ առանձին անձանց մոտ ոչ միանշանակ արձագանք է գտել եւ բերել այն մտահոգության, որ՝

* Այդ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահի ճանաչումը եւ դրանց հանձնումը մասնավոր հանքարդյունաբերական ընկերությանը իրավաչափ չէ:

* Քաջարան համայնքի բնակիչների տեղահանումը կնպաստի ՀՀ-ից արտագաղթին, ինչպես նաեւ սահմանամերձ գոտու բնակավայրերի թուլացմանը:

* Արդյունահանման տարածքների ընդլայնումը պայմանավորված է ոչ թե արտադրական անհրաժեշտությամբ, այլ միայն նպատակ է հետապնդում ավելացնել ընկերության շահույթը:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը հիմնադրվել է 1951թ.՝ Քաջարանի հանքավայրը շահագործելու նպատակով: Քաջարանի հանքավայրը ներառում է ներկայիս շահագործվող հանքը, ինչպես նաեւ Ողջի գետի ձախ ափին գտնվող տարածքները, որտեղ եւ տեղակայված է Քաջարան գյուղը: Գետի հոսանքն ի վար տեղակայված են կոմբինատը եւ Քաջարան քաղաքը, որը ունի շուրջ 7000 բնակչություն:

ԶՊՄԿ-ը Հայաստանի Հանրապետության առաջատար արդյունաբերական ընկերություն է, որի արտադրանքը իրացվում է արտաքին շուկաներում, ինչի արդյունքում ապահովվում է հանրապետության արտարժույթի ներհոսքի զգալի մասը: Միաժամանակ, արտաքին շուկաներում ձեռք բերված ֆինանսական միջոցները ծախսվում են Հայաստանում՝ նպաստելով ՀՀ տնտեսության զարգացմանը: Օրինակ՝ 2011թ. ընթացքում կոմբինատն իր կենսագործունեությունն ապահովելու նպատակով տեղական 347 ընկերությունների հետ կնքել է ապրանքների ձեռք բերման եւ ծառայությունների մատուցման շուրջ 44.2 մլրդ ՀՀ դրամի պայմանագրեր եւ գործարքներ: Կոմբինատը ներկայում ունենալով 3200 աշխատակից, Քաջարան քաղաքի համար ըստ էության հանդիսանալով քաղաք ձեւավորող ձեռնարկություն՝ իր աշխատակիցներին, նրանց ընտանիքի անդամներին, ասել է, թե համայնքի բնակչության համար ապահովում է միջին հանրապետականից բարձր կենսամակարդակ:

Ավելորդ չենք համարում նաեւ նշել, որ կոմբինատի կողմից արտադրվող մոլիբդենի խտանյութը ամբողջությամբ վերամշակվում է Հայաստանում՝ Երեւանում գտնվող ձեռնարկությունների կողմից, որոնք իրենց հերթին ունեն մոտ 1000 աշխատակից: Այսպիսով, անվիճարկելի է, որ ԶՊՄԿ-ը ինչպես Սյունիքի տարածաշրջանի, այնպես էլ ողջ հանրապետության տնտեսական կայունության եւ շարունակական զարգացման երաշխիքներից մեկն է:

«ՔՐՈՆԻՄԵՏ ՄայՆինգ» ընկերությունը անվերապահորեն ընդունելով իր, որպես ներդրողի, պատասխանատվությունը Հայաստանի ազգային արժեքներից մեկի՝ ԶՊՄԿ-ի գործունեության համար, կոմբինատի տնօրինության հետ համատեղ իրականացնում է հանքարդյունահանման երկարաժամկետ պլանավորում եւ օգտակար հանածոների հավասարակշռված արդյունահանում: Մեր այս մարտավարությունը թեեւ նվազեցնում է ընկերության այսրոպեական շահույթը, սակայն երաշխավորում է Հայաստանի համար բացառիկ տնտեսական նշանակություն ունեցող հանքավայրի երկարակեցությունը:

Հպարտությամբ կարող ենք փաստել, որ «ՔՐՈՆԻՄԵՏ ՄայՆինգ» ընկերությունը անշեղորեն կատարում է իր ներդրումային պարտավորությունները: Վերջին տարիներին իրականացված շուրջ 500.000.000 դոլարի ներդրման շնորհիվ ապահովվել է ձեռնարկության անխափան աշխատանքը, եւ այսօր կոմբինատն իր տեխնիկական հագեցվածությամբ ու արտադրական հզորությամբ առնվազն չի զիջում համաշխարհային լավագույն օրինակներին:

Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաեւ ԶՊՄԿ-ի աշխատանքների կազմակերպման բնապահպանական բաղադրիչը: Չնայած սեփականաշնորհումից հետո ստացած ծանր ժառանգությանը, մենք լուրջ ծրագրեր ենք իրականացրել առկա բնապահպանական իրավիճակի ուսումնասիրության եւ բարելավման նպատակով: Մասնավորապես փակվել է մոլիբդենի խտանյութի թրծման վնասակար արտադրությունը, մեծածավալ աշխատանքներ են իրականացվել հնացած պոչատարների փոխարինման եւ պոչամբարների ռեկուլտիվացիայի ուղղությամբ, միջազգային առաջատար ընկերությունների միջոցով կատարվել են առկա հիդրոտեխնոլոգիական շինությունների կայունության եւ վերակառուցման գնահատումներ:

Չբավարարվելով ձեռք բերածով եւ հասկանալով հարցի կարեւորությունը՝ մենք նպատակադրված ենք միջնաժամկետ հեռանկարում, ՀՀ գործող օրենսդրության պահանջների կատարումից բացի, ապահովել միջազգային ստանդարտների կիրառում կոմբինատի կենսագործունեությունում:

Մեզ համար առաջնահերթությունների շարքում է բիզնեսի սոցիալական պատասխանատվության խնդիրը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի ծանր տարիներին բաժնետերերը, ինչպես նաեւ ԶՊՄԿ-ի տնօրինությունը, համախմբելով ունեցած ողջ ներուժը եւ հնարավորությունները, ապահովել են կոմբինատի բնականոն եւ անխափան աշխատանքը: Ի տարբերություն ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում գործող շատ հանքարդյունաբերական ընկերությունների, մեզ հաջողվել է նույնիսկ մետաղների գների աննախադեպ անկման պարագայում պահպանել բոլոր աշխատատեղերը եւ սովորականի նման, առանց ուշացումների, վճարել աշխատավարձ:

ԶՊՄԿ-ի բաժնետերերի որոշմամբ տարեցտարի զգալի միջոցներ են տրամադրվում (ոչ պակաս, քան 3 մլրդ ՀՀ դրամ) սոցիալական ծրագրերի ֆինանսավորման համար, որոնք իրականացվում են Հայաստանի ողջ տարածքում: Հաշվի առնելով ԶՊՄԿ աշխատակիցների անգնահատելի ներդրումը՝ բաժնետերերն ընկերության տարեկան զուտ շահույթի 5%-ը ուղղում են ընկերության աշխատակիցների պարգեւավճարների ֆոնդին, որի արդյունքում ԶՊՄԿ-ի ողջ աշխատակազմը ուղղակիորեն դառնում է ձեռնարկության հաջողությունների շահառու:

Ամփոփելով ասվածը՝ ցանկանում ենք լայն հասարակության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ գործող հանքի ընդլայնումը բացառապես պայմանավորված է ԶՊՄԿ գործունեության երկարաժամկետ պլանավորման հետ եւ նախատեսված է թե խորհրդային շրջանի նախագծերով եւ թե գործող կոնցեսիոն համաձայնագրով: Կոմբինատի գործունեությունը ոչ միայն չի նպաստում բնակչության արտագաղթին, այլեւ հակառակը՝ ռազմավարական նշանակություն ունի սահմանամերձ շրջանի ամրապնդման եւ տնտեսական զարգացման համար: ԶՊՄԿ-ի եւ տեղական ենթակապալառու կազմակերպությունների հազարավոր աշխատակիցներ կոմբինատում կայուն եւ երաշխավորված եկամուտ ունենալու շնորհիվ իրենց եւ զավակների ապագան կապում են Հայրենիքի հետ: Ձեւավորվել եւ գործում է մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատակազմ, մարդիկ կապված են իրենց աշխատանքային կոլեկտիվին, մասնագիտական ժառանգորդության սկզբունքով շատ ընտանիքների համար կոմբինատը դարձել է հարազատ օջախ: ԶՊՄԿ-ն այսօր իր աշխատակիցների հպարտությունն է, եւ անվիճելի է նրա համազգային նշանակությունը: Մենք համապատասխան տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ ճանաչելու փաստը համարում ենք լիովին հիմնավորված, որը երաշխավորելու է Հայաստանի արդյունաբերական հսկայի՝ ԶՊՄԿ-ի հետագա շարունակական աշխատանքը:

Միաժամանակ ցանկանում ենք նշել, որ թեեւ վերոհիշյալ խնդրի վերաբերյալ տարբեր հասարակական կազմակերպությունների եւ անձանց կողմից բարձրացվող հարցերը եւ արվող եզրահանգումները ոչ միշտ են կրում կառուցողական բնույթ եւ հաճախ նույնիսկ աղերսներ չունեն իրերի իրական դրության հետ, այնուամենայնիվ մենք ողջունում ենք կառուցողական քննադատությունը եւ քննարկումները բոլոր շահագրգիռ կողմերի հետ՝ խնդիրների հնարավոր հանգուցալուծումները ապահովելու համար՝ գիտակցելով, որ քաղաքացիական հասարակության նման ակտիվությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գործում էական նշանակություն ունեցող ձեռնարկության գործունեության մտահոգությամբ:

Եզրափակելով՝ նշենք, որ «ՔՐՈՆԻՄԵՏ ՄայՆինգ» ընկերությունը վերահաստատում է իր դիրքորոշումը՝ խնդիրները լուծել քաղաքացիների իրավունքների պաշտպանության եւ ժողովրդավարության սկզբունքով: ԶՊՄԿ-ի տնօրինությունը բաժնետերերի կողմից լիազորված է, հաշվի առնելով կողմերի օրինական շահերն ու իրավունքները, փնտրել փոխզիջումային լուծումներ:

ՀՀ-ում «ՔՐՈՆԻՄԵՏ ՄայՆինգ» ԲԸ-ի ներկայացուցչություն

R

Առավոտ
a r a v o t d a i l y
ԵՐԵՔՇԱԲԹԻ 17.04.2012

# Այսօր Կարեն Դեմիրճյանը կդառնար ութսուն տարեկան

## Նա մեզանից հեռացավ առանց մեղքի զգացման եւ մաքուր ձեռքերով

Հասարակության ու ժողովրդի պահանջին անսալով, հայրենիքի առաջ ծառացած հսկայական խնդիրները խորապես ընկալելով եւ տասը տարվա լռությունից հետո Կարեն Դեմիրճյանը 1998-ին առաջադրեց իր թեկնածությունը: Հայաստանցիները պիտի ընտրություն կատարեին տասներկու թեկնածուների միջեւ, որոնցից տասը, նրանց թվում նաեւ նախագահի պաշտոնակատարը, պայքարում էին մեկի դեմ (բացառությունը Դավիթ Շահնազարյանն էր): Պայքարում էր պետական ապարատի մի ստվար մասը, լրատվամիջոցները, պետական քարոզչության մեքենան: Եթերից ստալինյան ժամանակների ոճով գռեհիկ ապատեղեկատվություն էր հաղորդվում, ցուցադրվող վարկաբեկիչ ու ցածրաճաշակ մուլտիկներում հրեշավոր մեղադրանքներ էին հնչում, որոնք մեկ-մեկ «բարի» ընդմիջումներ էին ունենում՝ «կլիզմայի անեկտոդների» տեսքով: Չնայած այս ամենին՝ Կարեն Դեմիրճյանը հաղթեց, հաղթեց հենց առաջին փուլում, բայց նշանակվեց երկրորդ փուլ, եւ կրկին, այս անգամ արդեն մասսայական՝ անհավանական ծավալի լցոնումներով, այնուամենայնիվ, նախագահական աթոռը բռնազավթվեց:

Հասարակությունը փոթորկված էր, մարդիկ պահանջում էին դուրս գալ փողոց, մարդիկ ուզում էին տեր կանգնել իրենց քվեներին...իսկ Կարեն Սերոբիչը գլուխն առած ափերի մեջ՝ նստած էր... մինչեւ այսօր ականջներիս մեջ են Մեծ ազգասերի խոսքերը... Ժողովուրդը երեխայի նման հավատավոր է, եթե նրան փողոց ես դուրս բերում, նախ ասելիք պիտի ունենաս, եթե խոստում ես տալիս, պիտի հաստատ իմանաս, որ կկատարես, այլապես նա կդառնա անկառավարելի ամբոխ... Իսկ իշխանության գալու համար նույնիսկ մեկ հայ մարդու մեկ կաթիլ արյունը չի կարելի թափել...



Իր սիրելի հայրենիքի հողում նա ցանում էր ժողովրդասիրության ու փոխըմբռնման աստվածածին սերմերը...

Շատ շատերն ընդվզեցին, նույնիսկ մեղադրեցին...միայն տարիներ հետո պարզ դարձավ, որ նա բոլորից լավ էր հասկանում ու զգում իր մրցակցի ատելության ողջ ուժը՝ իշխանատենչության աստիճանը:

1998-ի հենց այդ օրերին հայոց հողի մեջ նետվեցին նաեւ ժողովրդատյացության ու ղարաբաղցի-հայաստանցի հակամարտության վիշապածին սերմերը...

Ցնցումներից, արյունից խուսափելու համար հմուտ առաջնորդը պայքարի այլ մարտավարություն էր նախորոշել. եւ մի տարի անց արդեն «Միասնություն» դաշինքը կազմեց հենց այն ուժի հետ, որ ընտրությունների ժամանակ իր անհաշտ հակառակորդն էր: Այո, այդպիսի ձգողականության ուժ ուներ նրա նվիրումը ազգին ու պետությանը: Շատ չանցած՝ փորձառու քաղաքական գործիչն արդեն Ազգային ժողովի պատգամավորն ու նախագահն էր...

Իսկ մի քանի ամիս հետո հոկտեմբերի 27-ն էր... երանի թե օրացույցից ջնջված լիներ այդ ամսաթիվը, եւ մենք այսօր ազգովի նշեինք Կարեն Սերոբի Դեմիրճյանի ութսունամյա հոբելյանը:

Անսահման եմ ցավում, որ նույնիսկ նրա նման իմաստուն մարդն ընդունակ չեղավ լիովին ընկալելու վիշապածին սերմերի զորությունն ու կանխելու այդ մեծ աղետն ու խայտառակությունը, չհասցրեց զգուշացնել, որ նոր չարիքներ են գալու:

2003-ին կրկին նախագահական ընտրություններ էին... Թեկնածուների մեջ կրկին Դեմիրճյան ազգանունն էր: Բայց կեղծարարների «թիմն» արդեն լուրջ փորձ էր ձեռք բերել, ու զինանոցն ավելի քան հարուստ էր... Իշխանությունը կրկին բռնազավթվեց...Ապացուցված բազում կեղծիքները եւ մեկ միլիոն լրացուցիչ քվեաթերթիկի տպագրության փաստը Սահմանադրական դատարանին պարտադրեցին «Վստահության հանրաքվե» անցկացնելու որոշում կայացնել ... Ու նորից սկսվեցին վարկաբեկման հզոր ալիքը եւ մասսայական բռնությունները...

Սասունցի Դավիթի հայրենակիցների համբերության բաժակը լցվեց, արդարությունը որպես դրոշ պարզած՝ մարդիկ ապրիլի 12-ին դուրս հորդացին տներից՝ պահանջելով Վստահության հանրաքվեի կայացումը: Բողոքի խաղաղ ցույցի դուրս եկածներին դիմավորեցին էլի հայերը, բայց հրաման կատարող հայերը՝ գործի դրվեցին մահակները, էլեկտրաշոկերը, կանանց մազերից բռնած քարշ էին տալիս Բաղրամյան պողոտայով...

Մի քանի տասնյակ «ազգային», «ժողովրդավար» կուսակցություններից եւ ոչ մեկը որեւէ ձայն չհանեց... Սկսվեց համազգային լռության, տնտեսական «հաջողությունների», նոր աշխատատեղերի «բացման»... ժարգոնների կտրման ու հոկտեմբերի 27-ի բացահայտման իմիտացիաների հնգամյակը... որ բերեց, բերեց ու մեզ ազգովի հասցրեց մի անդառնալի շեմի՝ մարտի 1-ին...

Ուրվագծեցի մեր երիտասարդ հանրապետության երեք նախագահական ընտրությունները, եւ ինչպես տեսաք հստակ երեւում է դաժանության առումով նույն, բայց կատարելագործվող ձեռագիրը... Այսօր ինչ-որ շատ է խոսվում երկրորդ նախագահի մեծ քաղաքականություն վերադարձի մասին, քննարկվում են Հայաստանում կամ արտերկրներում զբաղեցնելիք պաշտոնները, նրա բիզնեսի ծավալները, ներգործությունն այս կամ այն քաղաքական ուժի վրա... եւ այլն, եւ այլն... Է˜, եթե կարող է, թող վերադառնա, գուցե՞ այս անգամ նրան հաջողվի բացահայտել հոկտեմբերի 27-ի պատվիրատուներին, ի վերջո այդքան մեծ ջանքեր է թափել, կամ գուցե՞ մարտի 1-ին «ծառերի ետեւից կրակողներին» է կարողանում գտնել:

Մի՞թե անպայման պիտի տասնմեկ անմեղ մարդու արյուն հեղվեր Հայոց հողի վրա, որ հրաման կատարողները սկսեին խոսել իրենց հայրենակիցների հետ, կամ գուցե ուղղակի հրաման տվողներն են փոխվել... Այսօր մեր երկրի քաղաքական դաշտում երկխոսությունների միտում է նկատվում, որ նախկինում պատկերացնելն անգամ հնարավոր չէր... ղարաբաղցի-հայաստանցի հակամարտությունը կարծես սկսում է իրեն սպառել ... մի տեսակ ավելի հանդուրժող ենք դարձել, եւ այլակարծությունն այլեւս դադարել է մահացու մեղք կամ պետական դավաճանություն լինելուց...

Այսօր Հայաստանի ազգային հերոս Կարեն Դեմիրճյանը կդառնար ութսուն տարեկան... Անժամանակ ու ցավալի ձեւով լքեց նա մեզ... Հոկտեմբերի 27-ը անջնջելի խարան է մեր նորանկախ պատմության ճակատին, բայց Կարեն Դեմիրճյանն, ի տարբերություն խառնակ ժամանակների բազմաթիվ իշխանավորների, մեզանից հեռացավ առանց մեղքի զգացման եւ մաքուր ձեռքերով... ես համոզված եմ, որ, այնուամենայնիվ, նրա ցանած սերմերն են, որ սկսել են ծլարձակել մեր բարեբեր հողի վրա...

Ուզում եմ հավատալ, որ մենք իսկապես փոխվում ենք...

ԷՄՄԱ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ
ԱԺ նախկին պատգամավոր

# Կամ բնակարանը տվեք, կամ՝ գումարը

## Արմեն Եղյանի եւ «Դվին Կոնցեռն» փակ բաժնետիրական ընկերության միջեւ եղել է դատական վեճ, որն ավարտվել է հօգուտ Ա. Եղյանի:

1989թ. նախկին տեղական ինքնակառավարման մարմնի՝ Սպանդարյանի շրջանային գործկոմի կողմից Երեւանի Տերյան փողոցի թիվ 15 հասցեում գտնվող տունն իրացվել է: Նույն տեղում շինարարություն իրականացնող «Հայշինանյութեր» կազմակերպությանը հանձնարարվել է, որպեսզի կառուցվող շենքի 4-րդ հարկի 3 սենյականոց բնակարանը հատկացվի Եղյան ընտանիքին:

Հետագայում նշված շենքը կիսակառույց վիճակով «Հայշինանյութերը» վաճառում է «Դվին Կոնցեռն» ընկերությանը, որպեսզի շինարարությունն ավարտի, բնակիչներին ապահովի բնակարաններով, ստանձնի իրավահաջորդի պարտականությունները: «Դվին Կոնցեռնը» պայմանագիր է կապում Արմեն Եղյանի հոր՝ Համազասպի հետ, պարտավորվելով 3 սենյականոց բնակարան հատկացնել նրանց բազմանդամ ընտանիքին:

Սակայն հետագայում պարզվում է, որ նույն իրավահաջորդը նշված 3 սենյականոց բնակարանը դատարանի վճռով հանձնել է մեկ այլ քաղաքացու՝ Հ. Վարդանյանին, սեփականության իրավունքով:

Նշված գործարքն էլ կատարվել էր 1992թ.-ին, առուծախի պայմանագրով, բնակարանն էլ արժեցել էր մեկ միլիոն երկու հարյուր հազար ռուբլի:

Արմեն Եղյանն ասում է, որ «Դվին Կոնցեռնը» նախապես իմացել է, որ իրենց բնակարանը սեփականատեր ունի, վաճառված է, քանի որ ընկերությունը որպես պատասխանող հանդես էր եկել անգամ դատարանում:

Ի դեպ, դատարանում «Դվին Կոնցեռնը» չի էլ հայտնել, որ նշված բնակարանի հետ կապված առուվաճառքի պայմանագիր կա նաեւ Եղյանների ընտանիքի հետ: Արմեն Եղյանի հայրը եւ մայրը մահանում են, եւ իրավահաջորդությունը փոխանցվում է հենց իրեն:

«Դվին Կոնցեռնը» Արմեն Եղյանից ստանում է 10 000 դոլար գումար՝ որպես ավելացված տարածքի համար վճար:

Այս գործարքի պատասխանատու Ռաֆիկ Սարգսյանը պարտավորվում է, որ գումարն ստանալուն պես կատարել սեփականության իրավունքի գրանցման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները...

Այդքանով հանդերձ՝ «Դվին Կոնցեռնը» դիմում է դատարան՝ վիճարկվող բնակարանի եւ մյուս սեփականատերերի հետ պայմանագրերը լուծելու հարցով: Այս անգամ էլ տեղյակ չի պահվում Ա. Եղյանը, որպես պատասխանող դատական գործընթացներին մասնակցելու համար:

Ա. Եղյանը դիմում է դատարան՝ պահանջելով իրեն հասցրած վնասի հատուցում. կամ բնակարանը, կամ այն գումարը, որը տրվել է բնակարանի կառուցման համար:

Նման դեպքերի համար, ըստ Քաղաքացիական օրենսգրքի, սահմանվել էր հետեւյալը. իրավունքը խախտած անձը, եթե ստացել է եկամուտներ, ապա անձը, որի իրավունքի խախտման հաշվին է կատարվել այդ, պետք է ստանա կամ կորցրած գույքը, կամ չստացված այն եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր:

Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Արա Կուբանյան) կայացրել է վճիռ, համաձայն որի՝ «Դվին Կոնցեռնից» հօգուտ Արմեն Եղյանի պետք է բռնագանձվի 240 520 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որպես վնասի հատուցում, որից 185.921 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը որպես մինչ 2009թ. չբնակեցված բնակարանի շուկայական արժեք, իսկ 13 958 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը՝ որպես Արմեն Եղյանից վերցրած 10 000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար եւ դրա վրա հաշվարկված տոկոսների գումար:

2009 թվականից մինչ օրս դատական ակտերի հարկադիր կատարողները ոչ մի գործողություն չեն իրականացրել, եւ դատարանի վճիռն, ըստ էության, չի կատարվել:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

### Ընտրողների թիվը վերջնական է

Ի կատարումն ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ մասի՝ ոստիկանությունը հրապարակում է ՀՀ ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը, յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների թվի նշմամբ:

Այսպես. Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվն է՝ 2. 482. 593, որից

1. Այլ համայնքի հաշվառում ունեցող, ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես հանված եւ ըստ քվեարկելու օրը գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակ ընդգրկված՝ 684.

2. Հայաստանի Հանրապետությունում հաշվառում չունեցող, քվեարկության օրը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու վայրի մոտակա ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակ ընդգրկված՝ 46.

3. Քվեարկության օրը ընտրական տեղամասեր գործուղվող, իրենց հաշվառման վայրի ընտրողների ցուցակից հանված եւ ընտրական տեղամասում քվեարկող ոստիկանների լրացուցիչ ցուցակ ընդգրկված՝ 11.

4. Ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատությունում քվեարկությանը մասնակցող ընտրողների լրացուցիչ ցուցակ ընդգրկված՝ 0:

### Պատվո շքանշան՝ դատախազին

ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայքէջի տեղեկացմամբ, Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հրամանագրով ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը պարգեւատրվել է Պատվո շքանշանով: